

տիչ Նաղաչ Եպիսկոպոս Ամթեցին, Գրիգորիս Կաթուղիկո Աղթամարցին, Զաքրիայ Եպս. Գնունեցին, Յովնաթան Նաղաչը եւ ուրիշներ որոնք թէ նշանաւոր տաղասացներ եւ թէ տաղանդաւոր ծաղկող-նկարողներ էին, որոնց թէ տաղերուն եւ թէ մանրանկարներուն ծանօթ ենք: Ուրեմն զարմանալի ոչինչ կայ եթէ Թորոս Տարօնեցի ծաղկող-մանրանկարիչ ըլլալով հանդերձ ըլլայ եւ կարող տաղասաց:

Ինքը ժուժկալ է եղած յիշատակարաններու գրչութեան մէջ, յաճախ բաւականանալով միայն իր անուան յիշատակութեամբ: Սակայն իր տաղասացական բնատուր ձիրքը երբեմն իր կարճ յիշատակութեանց մէջ ալ իր գրչին տակէն սպրդած են: Օրինակ Ամբոտու վանքը գտնուող Աստուածաշունչին մէջ որ գրեալ է Դաւիթ Գետկեցւոյ կողմէ Առաքել վարդապետ Հաղբատեցիի համար, 1328-ին ի Գլաճոր, Թորոս Տարօնեցի ունի երկու համառօտ ինքնագիր յիշատակութիւններ, եւ ասոնցմէ մին իսկ չափազրեալ է սապէս

Առաքեալ Հաղբատեցի
եւ բարունի եւ Թֆլիսի,
աղօթք արա դու Թորոսի,
որ զգիրքս ծաղկեցի:

Դարձեալ Բաղէչի Ս. Սարգիս եկեղեցին գտնուող աւետարանը, Ապահունիս գրեալ Թորոսի իսկ ձեռքով եւ անկէ ալ ծաղկեալ, ունի մասամբ անեղծ յիշակարան մը ուր ի մէջ այլոց տաղաչափեալ կը կարդանք

յայս դառնացեալ ժամանակիս, (1330)
նեղութիւնս ազգի ազգիս,
որ պահանջեն զգին հաւատիս,
գոլով անտէր ազգ (...մաշած...):

Յարգ ստիպուած ենք այսքանով ալ բաւականանալ ընդունելու համար որ Թորոս Տարօնեցի տաղասաց էր, եւ իրն են այն տողերը որոնք մեզի հասած են «գերի Թորոս» կամ միայն «Թորոս» ստորագրեալ:

Ես ռոս կը հրատարակեմ եօթը հատ Թորոսի տաղերէն: Ասոնք են միայն ինծի ծանօթ իր տաղերը: Անտարակոյս ըլլալու են նաեւ ուրիշներ որոնք հետզհետէ յայտնուին: